բերումս երևեցաւ. մի վայրենի մարդ։ Նա եկած է մօտակայ անտառներից. կատարելապէս մերկ է և ամբողջ մարմինը և երեսը մաղով է ծածկված։ Նրա վրա փորձեցին հագցնել շորերը, բայց նա պատռեց այդ շորերը։ Նա չէ կարող խօսել, բայց միայն անիմաստ հնչիւններ է արտասանում և յայտնի չէ թէ ինչ ազգութեան է պատկանում այդ վայրենին։

—

Պ. Յովհաննէս Աթանասեան Երևանից, խնդրում է մեզ յայտնել հետևեալը։ «Թաֆֆիի խենթի և Մելիքզադէի Հայ-կին գրուածների ռուսաց լեզուով թարգմանութիւնները պատրաստ են և ձեռագրի մէջ ցանկացողներին կը ծախվեն։ Ձեռագիրները մաքուր են արտագրված և միայն խենթի արտագրութեան համար եղել է 40 բուբլի ծախս։ Թարգմանութիւնների արժանաւորութեան համար կարող է երաշխաւոր լինել նոյն հեղինակի Ջալալէդդինի իմ թարգմանութիւնս, որ տպագրվեցաւ «Тифл. Вѣстн.» լրագրում, կարծեմ 1878 թվին։ Ցիշեալ թարգմանութիւնները գնել, կամ տպել ցանկացողները թող բարեհաճեն դիմել ինձ իրանց պայմաններով այսպէս. Эривань, Іоаннесу Атанасянцу։»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են որ ինտրիգաները հայոց դպրոցնեղի տեսուչ պ. Աբիսողոմ Յովհաննիսեանցի դէմ չարունակվում են։ Ինտրիգաների ղեկավարը ուսուցիչ Հայրապետ Ղուկասեանցն է։ Դա իրան ինչպէս երևում է, նպատակ է դրել վայր գցել տեսչին նրա պաշտօնից։ Ղուկասեանցի վարմունքը ամենանվայել և խայտառակ վարմունքն է, ինչպէս վկայում է մեր թղթակիցը։

—

Մեզ հաղորդում են Ալէքսանդրապօլից հետևեալ տեղեկութիւնները։ «Ցանքերը այս տարի լաւ են, անձրևները կանօնաւոր, եղանակը հով է և քաղաքիս փոշին պակաս է։ Սպասում ենք առատ հունձի։ Շուտով գարին կը քաղվի։ Ուտելիքների պակասութիւն լինելով, հացի գինը յանկարծ բարձրացաւ 1 ր. 60 կօպէկից մինչև 2 ր. 20 կ., և գուցէ աւելի էլ կը բարձրանայ, եթէ Երևանից և Թիֆլիսից ալիւր չը հասցնվի։ Բազարում գրեթէ չէ ճարվում ալիւրը. խորհուրդ ենք տալիս վաճառականներին չուտով ուղարկել ալիւրը։ Մեզ անհասկանալի պատճառով տակաւին ամեն բանի վրա բարձր մնաց. միսը 9 կօպէկ է և չէ ծախվում. մորթած մսի մեծ մասը օրերով մնում է այս ամսվայ շոքերին։»

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են։ «Մեր հաշտարար դատաւոր Սէրգէյ Նիկիտիչ Սարգսեանց թողեց Շամախի, փոխադրվելով նոյն պաշտօնով Երևան։ Ամբողջ քաղաքը ափսոսում է իր յարգած հաշտարար դատաւորի հեռանալու մասին։ Նը-բան ամենքս սիրում էինք, որպէս մի անաչառ դատաւոր, մի վերին աստիճանի բարի և արդար մարդ։ Հասարակութիւնը նրանից հրաժարական առնելու ժամանակ հացկերոյթ տուեց նրան, որին ներկայ էին և տեղիս բարձրաստիճան անձինք։ Ի նշան յարգանքի պ. Սարգսեանցին շամախեցիները ընծայեցին մի ոսկեայ չղթայ, որին կրելու համար առանձին հանրաթղթով թոյլտուութիւն խնդրեցին Թիֆլիսի դատաստանական պալատի նախագահին։»

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են։ «Յունիսի 14-ին վերադարձաւ Էջմիածնից Շամախու փոխանորդ գեր. Թադէոս եպիսկոպոս իր վարդապետի հետ միասին։ Հաստատ ասում են որ սրբազանը երկու ամսի չափ մնալով Էջմիածնի մէջ, ոչ մի անգամ չը կարողացաւ ներկայանալ Վեհափառին և միայն սինոդականների հետ տեսնվելով, վերադարձաւ Շամախի։ Անցեալ կիրակի եկեղեցում պատարագի ժամանակ գտնվումեն միմիայն սրբազանը, իր վարդապետը, երկու քահանաներ և ժամկոչը։ Պատարագը վերջանալուց յետոյ սրբազանը հարցնում է ժամկոչին՝ ուր է ժողովուրդը։ Ժամկոչը ձեռքը պարզելով դէպի այն կողմը, ուր գտնվում է հայ—աւետարանականների ժողովարանը, ասում է՝ ժողովուրդը այնտեղ քարոզ է լսում, սրբազան։»

—

Կիրակի յուլիսի 12-ին Արծրունու թատրոնում լինելու է հայերէն ներկայացումն յօգուտ մի խեղճ ընտանիքի։ Խաղալու են «Ինիկս լացըլիմ թէ փուղս» կօմ. 3 գործ. թարգ. Ղարագողեանցի, և «Պառաւներուն խրատ», վոդ. 1 գործ. հեղ. հանգուցեալ Տէր-Գրիգորեանցի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Հինգշաբթի օր Ազգ. Ժողովը նիստ ըրաւ ի Ղալաթիա ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և առժամեայ ատենապետութեամբ Ք. Ղազարոսեան էֆէնտիի։ Այն գումարման մէջ Ժողովին գլխաւոր աշխատութիւնքն եղան Նորընտիր երեսփոխանաց վաւերացումը։

Մի քանի երեսփոխանք հարցում ուղղեցին Վարչութեան՝ ի մասին Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին որ Պատարագին մէջ Էջմիածնայ Ս. Կաթողիկոսին անուն չէր յիշատակած։

Որոշապէս չեմք գիտեր թէ նոյն յարգելի երեսփոխանաց նպատակն ինչ է, այսինքն, ո՞րի ի նպաստ կամ ընդդէմ է սոյն հարցումն, ի պաշտպանութիւն Մայր-Աթոռոյ իրաւա՞նց, թէ ընդդէմ արարմանց Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին։

Խնդիրն եթէ Մայր-Աթոռոյ իրաւանց պաշտպանութեան վերայ է, պաշտպանութեան արժանի իրաւունքները քիչ չեն, իրաւունք, որք Ազգինն են, և հարկ է որ ադոնք ալ ի նկատ առնուին, իսկ եթէ Էջմիածնայ Ս. Կաթողիկոսի անուան ոչ—յիշատակութեան խնդրէն անդին չանցնիր, այն ատեն կըսեմք.—պէտք չէ որ հապճեպով վճիռ արձակեմք, որովհետև ադոր մէջ յոյժ փափուկ և կենսական խնդիր մը կայ, որ պէտք է լուրջ ուշադրութեան առնուի։

Ազգային միութեան խնդիրն է այդ, որ փոքր բան մը չէ, շատ մեծ է, և ահա այս պարագային մէջ՝ ուզենք չուզենք, մեր առջև կելնէ։ Արդ համառօտ կերպով մը բացատրեմք մեր միտքը։

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը Պատարագի ատեն Էջմիածնայ արդի Ս. Կաթողիկոսին անուան յիշատակութիւնը չէ ըներ. ասկէ չը հետևիր սակայն թէ Էջմիածնայ Աթոռին գերագահութիւնը չուզեր կամ չէ ուզեր ծանչել։

Գէորգ Դ.-ի երկու նախորդաց՝ այն է, յիշատակաց արժանի հոգելոյս Ներսէս Աշտարակեցիի և Մատթէոսի անուններն յիշատակեր է. ի՞նչու այդպէս ըրեր և ներկայ Ս. Կաթողիկոսը չէ յիշատակեր։

Ահա սոյն պարագային մէջ լինել կը թիւրուն խնդիրն.—աւասիկ.—Ս. Գէորգ Դ. հեստեալ և անվաւեր կանուանէ զԿաթողիկոսութիւն Սսայ և իւր այս անուանումը կարձանագրէ նաև Մաշտոցին մէջ։

Գէորգ Դ. Ազգին Ընդհանրական Կաթողիկոսն է. ադոր ըսելիք չունիմք. բայց նոր սոսկ փառասիրական դիտումներն և անձնական կարծիքներն Ազգին կամաց արտայայտութիւնքն և պաշտօնական կարծիքները չեն երբէք։

Այսպիսի կըսեմք, վասն զի ո՞ր ազգային եկեղեցական ընդհանուր ժողով այնպիսի հակազգային վճիռ և որոշում մը տուաւ և ե՞րբ—բնաւ ոչ, և աւելորդ է ըսել թէ չը կրնար տրուիլ իսկ, որովհետև ազգային և Հայաստանեայց Եկեղեցւոյ ոգւոյն և սկզբան հակառակ է բոլորովին։

Ուստի գործէն դատելով՝ կըսեմք, Էջմիածնայ Ս. Կաթողիկոսը պատասխանատու է, ըստ որում Ազգին և Եկեղեցւոյ մէջ պառակտում կը սերմանէ։ Հետևապէս, Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին ըրածը լռելեայն ազգու բողոք մ՚է ընդդէմ Էջմիածնայ արդի Ս. Կաթողիկոսին՝ որոյ ըրածն՝ ինչպէս ըսինք, ազգային և եկեղեցւոյ ոգւոյն և սկզբանն հակառակ է բոլորովին։

Լոյսի խմբագիրն ալ Ազգ. Ժողովոյ վերջին նիստերէն ոմանք առանձին առանձին կարող էին։—Ուստի հարկ եղաւ այդ վարչութիւնը փոխել։ Դժուարութիւն չունէին rara avis-ը գտնելու։ Պ. Ջերազ մի քանի օր էր որ Անգղիայէն վերադարձած էր և ամենուն աչքերն ի նա յարեցան։ — Սակայն դժուարութիւնը հոս էր որ Պ. Ջերազը համոզելն դիւրին չէր։ Հարկ չէ ըսել թէ ինչ արգելքներ ունէր։ Յունուարի ցուրտ դիշերները, ամեն դժուարութեանց յաղթելով, ձիւնէ և անձրևէ ծեծուած կերթայրն երիտասարդը Ջերազն համոզելու։ Անհնարին էր։ Այն ժամանակ աւելի սպառնական լեզուով խօսուեցաւ։ Ցոյց տրուեցաւ իրեն թէ ինքն աղատ չէ իրեն եղած հրաւէրը մերժել, ինքն որ միութիւնը ընելու համար պարագլուխներէն մին եղաւ և շատ դժուարութիւններ ի յարգանս և ի սէր իրեն հարթուեցան, ինքն պարտաւոր է իր ծառայութիւններ ընկերութեան մատուցանել։ Ուր ուրեմն պ. Ջերազ յանձնառու եղաւ, և մայիս 17/29-ին պաշտօնական ձեակերպութիւններն կատարուելով՝ քուէներն ամփոփուեցան պ. Ջերազի վրայ։ Այդ ընտրութիւնը մեծ գոհունակութիւն պատճառած է, և պատրիարք սրբազանը առաջինը եղաւ որ իր օրհնութեանցը հետ մէկ տեղ իր շնորհակալութիւններն խրկեց պ. Ջերազի։— Ազգ. ժողովոյ նախագահ պ. Մերիէմ-գուլի, Միացեալ ընկերութեան նախագահ պ. Ալթիւն-Տիւրրի, Տօքթ. Փեշտմալճեան և ընկերութեան ուրիշ ականաւոր անձինք մեծապէս գոհ էին, զի իրենք ալ ջերմ կերպով աշխատեցան այս գործին։

Պ. Ջերազ արդէն հանրածանօթ է։ Ազգ. ինքնօրինութեան խնդրոյն մէջ իր կատարած պաշտօններովը ցոյց տուաւ թէ ճարտար է, խոհեմ և աղէկ մտածող։ Անգղիոյ խորհրդարանին մէջ այս օրերս տեղի ունեցած կարևոր վիճաբանութիւններն ակներև կընեն թէ պ. Ջերազ որչափ յաջողած է իւր պաշտօնին մէջ։— Պ. Ջերազ, հեղինակ Ազգային Դատարակութիւն գրքին, ցոյց տուած է թէ կրթական հարցերու մէջ ինչ լայն գաղափարներ ունի։ Իւր գրական փորձերէն կը տեսնուի թէ վեհ ոգի մը, աներկիւղ բնութիւն մը, ազնիւ սիրտ մը և մշակեալ միտք մը ունի. այդ գիրքը դըպրոցի գրասեղաններուն վրայ դրած է։— Եթէ մէկը պ. Ջերազի գործերն կարդացած չըլլայ, զինքն ի մօտոյ ճանչցած չըլլայ, բայց և այնպէս միանգամ գնա տեսնելուն գեղեցիկ գաղափար մը կը ստանայ։ Երկայնահասակ երիտասարդ մը, թուխ ու խարտեաշ, համակիր սիրուն դէմք մը, խոհուն և լուրջ, որ միշտ խորունկ կերպով մտածող միտք մը ցոյց կուտայ, անուշ և մեղամաղձիկ աչքեր որ կը յափշտակեն։ Ինքն հաճեղ և վերջին աստիճան կրթուած, ընկերականութեան տեսակէտով։ Իրեն հետ տեսնուողներուն սիրտն ու միտքը միշտ գրաւած է։ Ահա այսպէս բարոյապէս և ֆիզիզապէս գեղեցիկ օժտեալ երիտասարդն է որ Միացեալ ընկերութեանց գլխավոր կըլլայ։ Չը մոռնանք ըսել որ շատ անգամ ստիպեալ է իր գրելու ոճը զարդարուն ընել, որպէս զի ընդհանուր ժողովուրդէն դիւրաւ հասկցուի։— Ապագայն ցոյց պիտի տայ թէ պ. Ջերազ իր պաշտօնակցաց ընտրութեան մէջ որչափ յաջողած է։ — Ընկերութիւն մը որ տարեկան 4—50,000 բուբլի ծախս մը ունի, այդ ծախուց տնօրէնը պէտք էր կարգել այնպիսի անձ մը որ թէ առուտուրէ գործը լաւ հասկնայ և թէ անունը ո՛ և է կասկածանաց իսկ տեղի չը տայ։ Պ. Ջերազ այդ պաշտօնը յանձնեց պ. Յովհաննէս Կիւլպէնկեանի, որդի Կիւլպէնկեան պ. Սերովբէի, ատենապետ Սովելոց Ցանձնաժողովի։ Հիմայ այդ պատուաւոր անունը ամենքը գիտեն, ուստի խօսելն աւելորդ է։ Ծախուց նորընտիր պ. տնօրէնը, արդէն ինքն ալ վաճառականական տան մը գլուխ է։

Ծախուց հետ միասին ամենէն կարևոր գործերէն մին ալ հասոյթից գործն է։ Մտածել, խորհել, հասոյթի աղբիւրներ գտնել, զանոնք գտնելու աշխատել դիւրին գործ չէ։ Այդ աշխատութիւնն ալ յանձնուեցաւ ատենապետի կողմէ պ. Միսաք Մանուկեանի։ Այս երիտասարդն ալ, ինչպէս պ. Կիւլպէնկեան, կեսարացի է, և կը վերաբերի կեսարացի վաճառականաց այն դասին, որք իրենց պատուովը, գործունէութեամբ պատիւ են հայ վաճառականաց։ Կըսեն թէ Կ. Պոլսոյ հարստութիւնը հրէաներուն և կեսարացի հայ վաճառականներուն պիտի մնայ։— Մանուկեանք մեծ, բազմաթիւ, հարուստ ընտանիք են։ Հասոյթից պ. Տնօրէնը լաւ կաշխատի, յամառութեամբ և կերևայ այժմէն թէ ընկերութեան շատ արդիւնաւոր պիտի ըլլայ։— Հասոյթից և ծախուց կեդրոն եղող գանձը յանձնեց պ. Ջերազ, Թօփալեան պ. Գէորգի խնամոցը, կիւրնցի հայ վաճառականը, որոյ անունը «Մշակի» ընթերցողաց ծանօթ ըլլալու է։— Իր աշխատութեամբը յառաջացած, պ. Թօփալեան այսօր հայ վաճառականաց դասուն մէջ նշանաւոր տեղ մը գրաւած է, օրըստօրէ կը յառաջանայ, և այսպիսի գանձապետ մը ունենալուն համար ընկերութիւնը գոհ պէտք է ըլլայ։

Այսպէսով դրամական գործերն կը յանձնէ պ. Ջերազ այնպիսի անձաց ձեռք, որք իրենց նիւթական վիճակովը, գործունէութեամբը և պատուովը ո՛ և է փափագանաց տեղի չեն ձգեր։

Ընկերութեան մէջ հոգ տանելու կարևոր աշխատութիւններէն մին ալ հաշուակալութիւնն է։ Դասատուաց, տեսուչներու, չէնքերու, կեդրոնական ծախքերու, հասոյթներու, որ մէկն ըսեմ վերաբերեալ գործողութեանց հսկել, կանոնաւոր տետրակներու մէջ պայծառ կերպով արձանագրել, այնպէս որ հաշուակալութիւնը ո՛ և է քննադատութեան տեղի չը տայ, շատ խնամոց արժանի աշխատութիւն մ՚է։ Պ. Յովհաննէս Շնորհքեան, որ տեղւոյս մեծ դրամատուներէն միոյն մէջ հաշուակալութեան պաշտօն կը վարէ, և այս ճիւղին մասնաւոր յարմարութիւններ ունի և մանաւանդ որ վարչական գործոց մէջ ունեցած յատկութիւններն ծանօթ էին, թէպէտ ինք մեծ տարիք մը չունի, ընդհանուր հաշուակալ ընտրուեցաւ։

Ատենադպրի պաշտօնը ստանձնեց պ. Յովհաննէս Արշակունի։ Սոյն պարոնը Կիլիկեան ընկերութեան ոգին էր և ամբողջ Կիլիկիան լաւ կը ճանչէ ու հոն մեծ ազդեցութիւն ունի։ Ընկերութեան մէջ գործոն դեր մը կատարած է միշտ, և Անգղիոյ մէջ ունեցած յարաբերութեամբք ուրիշ կերպերով ալ ազգին օգտակար եղած է։— Պ. Արշակունի վարչութեան պատուական աջակիցներէն մին է։

Կրթութեան տնօրէնին պաշտոնի կարևորութեան վրայ խօսելն աւելորդ է։ Ուսումնասիրել վարժարանաց վիճակը, առանց վերացեալ գաղափարներու ծառայելու, պարզ ու գործնական միջոցներ պատրաստել հայ գիւղացւոց կրթութեան այնպիսի փափուկ պաշտոն մ՚է, որոյ արժանաւորներն քիչ են։— Պ. Ռէթէոս Պէրպէրեան, Կ. Պոլսոյ գրագիտաց մէջ նշանաւոր տեղ մը բռնած է, բայց ինքն իրը գրագէտ չէ որ կոչուած է Միացեալ ընկերութեանց կրթութեան տնօրէնի պաշտօնին։—Երկար ատեն դաստուի պաշտօն վարած և այժմ մասնաւոր վարժարան մը հիմնած, այս պաշտօնին ամենէն լաւ հանրուղներէն մին էր։—Քանի որ պաշտօնի գլուխ անցած է, կը տեսնենք որ թէ խղճի մտօք և թէ գործէն հասկցողի արժէքով կաշխատի, և շատ յոյսեր ունենք որ կրթական ճիւղին աղէկ ուղղութիւն մը պիտի տայ։

Ահա այս եօթը անձերն են որ այժմ ստանձնած են մեր ամենէն կարևոր ձեռնարկին ուղղութիւնը։ Առ այժմ ինչ որ խիստ կարևոր է ընելը և կարելի է ընել՝ կընեն։— Երբ հայ ազգը անխտիր իր օժանդակութիւնները ընծայէ, իր նպաստները տայ, իր կարծիքներն ու խորհուրդներն հաղորդէ, այն ատեն շատ աւելի մեծ գործեր յառաջ կրնան գալ։ Չը մոռնանք թէ տակաւին մի քանի տարիներու գործ է այս։ Ինչպէս ըսինք այս նիւթին վրայ աւելի յաճախ պիտի գրենք իբր տեղեկութիւն հաղորդող և իբր քննադատող։

Կը սպասենք մեր Ռուսիոյ եղբայրներէն որ ինչպէս անցեալին մէջ մեծապէս նպաստեցին Արարատեանի, այսուհետև որ այդ գործը շատ աւելի մեծցած է, իրենք ալ իրենց նպաստները այնքան աւելի մեծցնեն։ Եւ այն կապերը որ մի քանի տարիէ միասին կապեցինք, կապեր՝ որ իրենց օգուտները զանազան տեսակէտներով ունեցած են թրքաց իսկ երկիւղ ազդեցին, այդ կապերը չը պիտի խզուին, այլ աւելի պիտի ամրանան։

Հայկակ

ջին նստին առաջարկութիւն մը ներկայեց, որով տեղեկութիւն կը խնդրէր Ընդհանրական Կաթողիկոսութեան և Էջմիածնայ արդի վիճակին, կացութեանը, դրութեանն և մանաւանդ հաշուական գործոց նկատմամբ, և կուզէր գիտնալ թէ ինչ կընէ Էջմիածին ազգային զարգացման, ազգային շահուց և իրաւանց պահպանութեան և կրօնի ու բարոյական կրթութեան ծաւալման մասին: Այս խնդիրը նախաքննիչ դիւանաց կազմութենէն ետքի թողուեցաւ: Երբ կարգը այս երկուքին գայ, Ազգ. ժողովոյ մէջ մեր Եպիսկոպոսական պարտաւորութիւնը լիովին ի գործ պիտի դնեմք:

Ազգ. ժողովոյ վերջին նստին վաւերացեալ Եպիսկոպոսաց անուանքն են՝ Գեր. Հարք. Գրիգոր եպիսկոպոս Տէր-Պողոսեան,—Տ. Գէորգ վ. Բուսաճուզլեան (Պատր. փոխանորդ). Տ. Եղիշէ Վ. Այվազեան,—Տ. Յովհաննէս Վ. Արշարունի,—Տ. Յովհաննէս քահ. Հիւնքեարպէյէնտեան և Տ. Սուքիաս քահ. Մայր-եկեղեցւոյ և աշխարհականաց կարգէն՝ Մեծ էֆէնտիք՝ Սենեքերիմ Կիւլպէնկեան.—Յակոբ Պարոնեան,—Կարապետ Փանոսեան.—Յովհաննէս Թորոսեան,—Ռուբէն Պուլկարեան,—Ռէթէոս Թադէոսեան,—Գրիգոր Ներսէսեան,—Մկրտիչ Մէզպուրեան.—Յովհաննէս Քէրէստէճեան, Տօք. Վիշէն Օրմանեան,—Ղազար Հովուեան,—Տիգրանք Էքսերճեան,—Յարութիւն Պէկեան,—Նշան Պոյաճեան,—Յարութիւն Նորատունկեան,—Սերովբէ Ագնաւոր,—Լեւոն պէյ Քաբամաճեան,—Տօկ. Կոպէոնիկ Հիւնքեարպէյէնտեան,—Գառնիկ Յովհակիմեան,—Կարապետ Հազարեան,—Աւետիս Սուրէնեան,—Տօք. Յարութիւն Թիրեաքեան,—Տիգրան Հիւնքեարպէյէնտեան և Յակոբ Հաճեան:

Հրապարակաւ շնորհաւորելով սոյն նոր ընտիր Եպիսկոպոսաց էֆէնտիները՝ կը սիրեմք հաւատալ թէ գործով պիտի պատասխանեն իրենց կոչմանն ու փափուկ պաշտօնին, զոր Ազգն իրենց վստահած է իւր ազատ քուէովը:

Նաև՝ կը սիրեմք հաւատալ թէ յիշեալ մեծապատիւ էֆէնտիներն Ազգ. ժողովոյ իւրաքանչիւր նստին ներկայ պիտի գտնուին, որով ժողովն այսուհետև փոքրամասնութեամբ նիստ և որոշում ընելէ պիտի ազատի:

Ազգ. ժողովն այս տարի խիստ կարևոր աշխատութիւններ ունի: Ադոնց մէջ մեծ տեղ կը բռնեն Թաղային Մատակարարութեան, Դաստիարակութեան և պիւտճէի Ծրագիրներն, որք օրակարգին մէջ են: Ասոնցմէ զատ՝ կայ նաև Գաւառական վարչութեան կազմակերպութիւն, որ ազգային ներքին վերակազմութեան կենսական խնդրոյն առջև մեծ կարևորութիւն ունի, և հետևապէս՝ խորին ուշադրութեան արժանի է:

Այս կարգի խնդրոց օրինաւոր լուծումը կրնայ մեծ զարկ տալ ազգային զարգացման գործին, որով մեր ներքին խնդիրներն ալ նոր ուղղութիւն մը կրնան ստանալ:

Ուստի Ազգ. ժողովոյ պարտքը լինելու է այսուհետև ներքին խնդիրներով զբաղիլ:

(Լոյս)

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական պատգամաւորների ժողովի մէջ յուլիսի 4-ին առաջարկվեցաւ փակել ժողովի նիստը ամերիկական ժողովրդին և նրա նախագահ Հարֆիլդին համակրութիւն յայտնելու համար: Փարիզի մէջ, Հարֆիլդի վրա հրացան արձակելու մասին հեռագրին, սկզբից ոչ ոք չը հաւատաց, մանաւանդ որ հեռագիրը առաջ տպվեցաւ փոքր լրագիրներից մէկի մէջ: Պաշտօնական հեռագիրը միայն կէս գիշերին ստացվեցաւ: Փարիզի մէջ ապրող ամերիկացիները հաւաքվել էին ամերիկական դեսպանատան և „New-York-Herald“ լրագրի գրասենեակի առաջ: Այդ օրը դեսպանին այցելեցին և համակրութիւն յայտնեցին հանրապետութեան նախագահ Գրեվի, բոլոր մինիստրները, դեսպանները և բարձրաստիճան անձինք:

Բարտելեմի Սենտ-Իլեր մի շրջաբերական ուղարկեց Բ. Դրանը Տրիպոլի գօրքեր ուղարկելու մասին: Այդ շրջաբերականով արտաքին գործերի մինիստրը խորհուրդ է տալիս Թիւրքայ կառավարութեանը չափաւոր լինել, եթէ նա չէ կամենում վնասել իրան: Իր կողմից Բ. Դուռը վճռողականապէս մերժում է, իբր թէ նա որ և է թշնամական նպատակներ ունի Ֆրանսիայի վերաբերութեամբ: Սուլթանը հաւատացնում է, որ Թիւրքայ զօրքերի Տրիպոլի ուղարկելու միակ նպատակն է այնտեղ կարգապահութիւնը պահպանել:

Տունիսից հաղորդում են, որ „Մուստաֆա“ շոգենաւով Սֆակսից հասել են այնտեղ 800 փախստականներ, գլխաւորապէս հրէաներ: Քաղաքը կողոպտված է տեղացիներից: Ֆրանսիական հիւպատոսի տունը և Ֆրանսիացիների խանութները քանդված են: Եւրոպացիները կարողացան ապաստանվել նաւերի վրա հարուստ տեղացիների օգնութեամբ: Ապստամբները իրանց համար առաջնորդ են ընտրել: Նրանց հետ միացել են շրջականների մէջ բնակվող արաբները, որոնք բարձրացրել են կանաչ դրօշակը:

ԱՆԳԼԻԱ

—

Համայնքների ժողովի անդամներից մէկի հարցին Զարլզ Դիլկ պատասխանեց, որ անգլիական զրահակիր նաւերը ուղարկված են Սֆակս ոչ թէ պատերազմական գործողութիւններին մասնակցելու, այլ եւրոպացիներին պաշտպանելու համար: Գլադստոն պատասխանեց Վոլֆին, որ ոչ ոք չէ առաջարկել մի կոնֆերենցիա կազմել Տունիսի գործերի մասին: Միևնոյն ժամանակ նա յայտնեց, որ ժողովի այս շրջանին նա օրինագիծներ չի առաջարկի պարլամենտական երդման և կաշառատուութեան մասին: Համայնքների ժողովի մէջ Նորդկօպ, իսկ Լորդերի ժողովի մէջ Սալիսբիւրի կառավարութենից տեղեկութիւն խնդրեցին Հարֆիլդի առողջութեան մասին: Գլադստոն և Լորդ Գրենվիլ պատասխանեցին, որ վերջին տեղեկութիւնները Հարֆիլդի առողջութեան մասին հանգստացնող չեն: Դեռ դրանից առաջ կառավարութիւնը անգլիական երկու ժողովների մէջ էլ յայտնեց իր համակրութիւնը դէպի ամերիկական ժողովուրդը և նրա նախագահը: Գլադստոն ասաց, որ կառավարութիւնը լրագրական հեռագիրներից աւելի նորերը չունի, որ առաջիններից աւելի շուտ են ստացվում, քան թէ պաշտօնական հեռագիրները:

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Չեխիայի մէջ կատարված անկարգութիւնները մեծ ծառայութիւն արին աւստրիական հպատակ գերմանացիներին, որոնք այժմ բարձրաձայն պահանջում են իրանց տիրապետութեան վերականգնելը, գանգատվում են գերմանական իշխանութեան անկման վրա և յարձակվում են կենտրոնական կառավարութեան թուլութեան վրա, որովհետև նա չեխերին միւս ազգութիւնների հետ հաւասար իրաւունքներ է տուել: Պրագայի մէջ կատարված անկարգութիւններից օգուտ են քաղում ժողովրդի թշնամիները: Փողոցներում մի աննշան ամբոխից կատարած անկարգութիւնների պատճառով նրանք պահանջում են, որ հալածվի հինգ միլիօնաւոր մի ժողովուրդ: Հետաքրքիր է այն իրողութիւնը, որ ժողովրդական իրաւունքները սահմանափակելու համար աշխատում են ազատամիտները, բայց դրանք ամենից առաջ գերմանացիներ են և ազատութիւնը միայն իրանց համար են կամենում, մերժելով նոյնը չեխերին և սլաւեներին:

Չեխերը դեռ մինչև այժմ կատարեալ ինքնավարութիւն չեն ստացել: Վաղ ժամանակներից նրանք ստիպված են եղել համբերել գերմանական կենտրոնականութեան ճնշումը և բնականաբար գերմանացիները նրանց ատելի են դարձել, իբրև կամայականութեան և բռնութեան ներկայացուցիչներ: Պրագայի մէջ նորերում կատարված անկարգութիւնների պատճառն է այն բնական թշնամութիւնը, որ ծագեցրել են և պահպանել են իրանց դէմ աւստրիական գերմանացիները, ինքնիշխանաբար և կամայականութեամբ կառավարելով չեխերի երկիրը: Փոխանակ չեխերի ազգային իրաւունքները ճանաչելու, գերմանացիները արտաքոյ կարգի միջոցների գործադրութիւն են պահանջում: Անիրաւութիւնը և ճնշումը երբէք չեն հաստատի որ և է իշխանութեան հեղինակութիւն, կամ ներքին հանգստութիւն, մանաւանդ երբ հարցը չեխերի նման իրանց պատմական իրաւունքները հասկացող ազգութեան է վերաբերում: Տարաբաղդաբար կենտրոնականների ազատամիտ սկզբունքները չեն ազդում նրանց ազգային և քաղաքական կուրութեան վրա, իսկ Տաաֆէի մինիստրութիւնը այնքան եռանդոտ չէ, որ կարողանայ իրագործել իր մի անգամ արդէն որոշած նախագիծը:

Գերմանական լրագիրները ներկայումս լի են ամենաանմիտ մեղադրանքներով և մատնութիւններով: Չեխական կուսակցութեանը մեղադրում են, իբր թէ կատարված անկարգութիւնները այդ կուսակցութեան դաւադրութեան հետևանք է: Բայց ճշմարիտ է միայն այն, որ այդ բոլոր անկարգութիւնների և փողոցային կռիւների պատասխանատուութիւնը ամբողջապէս ընկնում է գերմանական ազատամիտ կենտրոնական կուսակցութեան վրա:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Իշխան Բիսմարկի որդին, որ մի քանի ամիս առաջ փախցրեց Բերլինի մէջ ամենայայտնի գեղեցկուհուն, կարօլատ իշխանուհուն, այժմ երբ տիկինը ստացաւ ապահարզան իր մարդուց, պսակվեց նրա հետ, հօր թոյլտուութեամբ: Իշխանուհին, ինչպէս հաւատացնում են, իր երիտասարդ ամուսնուց տաս տարով մեծ է:

* * *

Լրագիրները հաղորդում են, որ Կ. Պոլսի հայ կաթոլիկները Հասունի տեղ, որ Հռոմում կարդինալ դարձաւ, ընտրեցին պատրիարքի պաշտօնի վրա Ազարեան եպիսկոպոսին:

* * *

Լրագիրները հաղորդում են որ Կիեւի ամենահարուստ հրէաներից մօտ 60,000 ընտանիքներ, ուրեմն հաշուելով միջին թուով 4 հոգի ընտանիքի մէջ՝ մօտ 240,000 հոգի, վճռել են գաղթել Ռուսաստանից դէպի Սպանիա: Այդ բոլոր գաղթականները զբաղվում էին կամ առևտուրով կամ արդիւնագործութեամբ, ունէին խանութներ, ֆաբրիկաներ, գործարաններ, բանկեր, ուրեմն նրանց հեռանալը մեծ վնաս կը հասցնէ ոչ թէ միայն Կիեւի նահանգին, բայց և ամբողջ հարաւային Ռուսաստանին:

* * *

Տարնօրուզի մէջ մի հարուստ երիտասարդ Ֆլիաշեվսկի ազգանունով սիրահարված էր մի գեղեցիկ աղախնի վրա: Երիտասարդի ծնողները արգելում էին իրանց որդուն պսակվել աղախնի հետ: Այն ժամանակ սիրահարված զոյգը վճռեց անձնասպանութիւն գործել: Աղջիկը, որի անունն էր Եաղվիգա Ռէվուս, ճարեց իր տիրոջից մի հրացան, յանձնեց այդ հրացանը երիտասարդին և նրանք երկուսով հեռացան մի հեռաւոր սենեակ: Սենեակը փակելով Ֆլիաշէվսկի հրացան արձակեց օրիորդի վրա, որ իսկոյն ընկաւ անշնչացած, յետոյ ուղղեց հրացանը իր սրտին և այդպիսով վերջ տուեց և իր կեանքին:

* * *

«Голосъ» լրագրում կարդում ենք որ Լայպցիգի ոստիկանապետը հրաման ստացաւ Բերլինից աքսորել Լայպցիգից 19 հոգի գերմանական ամենայայտնի սոցիալիստներից: Ոստիկանապետը անարդար գտնելով այդ հրամանը, չը ստորագրեց թուղթը և ինքն էլ անմիջապէս հրաժարական առաւեց իր պաշտօնից:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յուլիսի: Հրատարակված է պետական կալուածների մինիստրութեան շրջաբերականը, որով բացատրվում են մինիստրների կոմիտէից առաջարկված Բարձրագոյն հաստատված կանոնագրութեան միջոցները, նրանց աջող իրագործման նպատակով: Պետական հողերը կապիտալիստներին և հարստահարողներին կապալով տալու տեղ պէտք է տրվին շինականներին և գիւղական ընկերութիւններին: Հրամայված է աճուրդները կատարել շրջանների վարչութիւնների մէջ հողերը կապալով տալու ժամանակ, բաժանելով հողերը մանր մասերի վրա և տեղեկացնել աճուրդի ժամանակի և տեղի մասին ազդարարութիւնների միջոցով գիւղական ժողովների մէջ: Հրամայված է պետական կալուածների կառավարիչներին ներկայացնել իրանց հայեացքները, առանց առաջվայ մինիստրների հայեացքները աչքի առաջն ունենալու:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յուլիսի: „Голосъ“ հաղորդում է որ երէկ հասաւ Ս. Պետերբուրգ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչ աւագը:

ՓԱՐԻԶ, 7 յուլիսի: Սֆակսի առուից յետոյ քաղաքը շրջապատող ձորում երկու ժամվայ ճակատամարտ եղաւ: Ֆրանսիացիների կորուստները աննշան են:

ԼՕՆԴՕՆ, 7 յուլիսի: Երէկ տեղի ունեցաւ յեղափոխականների կենդրէսի միտինգ, որին մասնակցում էին գրեթէ բոլոր պետութիւնների սոցիալիստները: Ասվեցան խիստ յարձակողական ճառեր: Վճռվեցաւ հետևել բանւորների միջազգային ընկերակցութեան սկզբունքներին և բողոքել Մոսքվի դատապարտման դէմ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յուլիսի: Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 37 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր. 50 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմակը արժէ 221 ր. 75 կ., երկրորդ 202 ր. 55 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 92 ր. 37 կ., երկրորդ 92 ր., երրորդ 92 ր. 5 կ., ոսկի 7 ր. 79 կ.: Ռուսաց մի ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,19 պէնս, Ամստերդամի վրա 127 պէնս, ռուսաց 100 ր. Բերլինի վրա արժէ 215 մարկ 50 պֆ., Փարիզի վրա արժէ 265 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը սմուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ